

**Տեղեկություն
հղիությունից հետո տրամադրվող
ընդլայնված հետծննդաբերական
նպաստների մասին՝
«Medi-Cal» և «Medi-Cal Access
Program»-ի համար**



Դուք հղի՞ եք: Կամ Դուք հղի եղե՞լ եք վերջին 60 օրվա ընթացքում կամ վերջերս կորցրե՞լ եք Ձեր հետծննդաբերական «Medi-Cal»-ը:

Եթե հղիության ժամանակ Դուք անհանգիստ կամ ընկճված եք եղել կամ այժմ նման տրամադրության մեջ եք, խոսեք Ձեր բուժապասարկողի հետ: Հնարավոր է, որ Դուք կարողանաք հղիությունից հետո ՄԵԿ ՏԱՐԻ պահպանել Ձեր «Medi-Cal»-ը՝ անկախ Ձեր ներգաղթային կարգավիճակից:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ: Խոսեք Ձեր բուժապասարկողի հետ և խնդրեք, որ լրացնի **MC 61** ձևը՝ բժշկական հաշվետվությունը «Medi-Cal or MCAP Postpartum Care Extension»-ի մասին: Դուք կամ Ձեր սպասարկողը կարող եք MC 61 ձևը գտնել DHCS-ի կայքում՝ <https://www.dhcs.ca.gov/formsandpubs/forms/Pages/default.aspx> հասցեով:

ՔԱՅԼ ԵՐԿՐՈՐԴ: Ձեր սպասարկողին խնդրեք լրացնել և ստորագրել MC 61 ձևը:

ՔԱՅԼ ԵՐՐՈՐԴ: Լրացված MC 61 ձևը վերադարձրեք Ձեր տեղական Շրջանային գրասենյակ՝ անձամբ այցելելով կամ փոստով կամ զանգահարեք Շրջան և տեղեկացեք, թե ուրիշ ինչ եղանակով կարող եք վերադարձնել MC 61 ձևը:

Ձեր շրջանի հեռախոսահամարը կարող եք գտնել այստեղ.
<https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/CountyOffices.aspx>

Եթե Դուք «Medi-Cal Access Program»-ի (MCAP) անդամ եք, ապա լրացված MC 61 ձևը կարող եք վերադարձնել՝

- փոստով՝ այն ուղարկելով MCAP, P.O. Box 15559, Sacramento, CA 95852-0559 կամ
- ֆաքսով՝ 1-888-889-9238 համարով կամ
- զանգահարեք MCAP՝ 1-800-433-2611 հեռախոսահամարով, և տեղեկացեք, թե MC 61 ձևն ուղարկելու ուրիշ ինչ տարբերակներ կան: